# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

EUA
EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## REPORT ON

### THE OUTCOMES OF 2023-2024 ACADEMIC YEAR AND 2024-2025 ADMISSION RESULTS

Երևան/ Yerevan 2024

| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ | EDUCATIONAL PROCESS |
|---|---|
| Հայաստանի եվրոպական համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորում, համակարգում և կարգավորում է ՀԵՀ գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ:<br>ՀԵՀ Գիտական խորհրդի 25%-ը ՀԵՀ ուսանողներն են, 25%-ը՝ ի պաշտոնե անդամները, 50%-ը՝ ընտրովի անդամներ:<br>Գիտական խորհրդի 55%-ը ունեն գիտական աստիճան, որոնց 27%-ը գիտության դոկտորներն են: | The academic, research, and scientific-technical endeavors of the European University of Armenia are meticulously planned, coordinated, and regulated under the auspices of the EUA Scientific Council, presided over by the Rector.<br>25% of the EUA Scientific Council comprises EUA students, 25% consists of ex officio members, and the remaining 50% are elected members.<br>55% of the Scientific Council members hold academic degrees, and 27% are distinguished as Doctors of Science. |
| 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում հրավիրվել է թվով 7 գիտական խորհրդի նիստ, որոնց ընթացքում.<br>➢ հաստատվել է թվով 12 ասպիրանտների և հայցորդների գիտությունների թեկնածուի և 1 գիտությունների դոկտորի գիտական աստիճանների հայցման թեմաներ և գիտական ղեկավարներ,<br>➢ ՀԵՀ գիտական խորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել.<br>● «Եվրոպական համալսարանի» գիտական հոդվածների ժողովածուներ՝ 14(02) և 15(01), | Throughout the 2023-2024 academic year, the EUA Scientific Council convened seven sessions, addressing the following matters:<br>➢ The topics and scientific supervisors for 12 postgraduate students, a PhD applicant and 1 Doctor of Sciences, have been approved.<br>➢ The EUA Scientific Council approved the publication of the following documents:<br>● "European University" collections of scientific articles: 14(02) and 15(01).<br>● "ESP for Psychology" educational manual by Sona Hayrapetyan and Hasmik Mkrtchyan |

- Սոնա Հայրապետյանի և Հասմիկ Մկրտչյանի հեղինակած "ESP for Psychology" ուսումնական ձեռնարկը,
- Տաթևիկ Մովսիսյանի հեղինակած «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները» մենագրությունը,
- Ա. Թադևոսյանի «Սնանկության վարույթի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը,
- Ն. Կիրակոսյանի և Ա. Մհերյանի «Կառավարում մասնագիտության առաջադրանքների ժողովածու, մաս 1» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը,
- Ա. Հանիսյանի «Հաշվապահական հաշվառման և աուդիտի հիմունքներ» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը՝ անգլերեն լեզվով,
- Մ. Ֆրանգուլյանի «Ռիսկերի կառավարում և գնահատում» ուսումնամեթոդական ձեռնարկը

➢ հաստատվել են հետևյալ ներքին նորմատիվային փաստաթղթերը.

- ՀԵՀ ներքին կարգապահական կանոնները՝ նոր խմբագրությամբ,
- Հայաստանի եվրոպական համալսարանի պատվավոր կոչումներ շնորհելու կարգ,

- Monograph "Ways to Solve the Problems of Ensuring the Quality of Higher Education in the Republic of Armenia" by Tatevik Movsisyan
- A. Tadevosyan's educational-methodological manual titled Legal Regulation of Bankruptcy Proceedings in the Republic of Armenia and Foreign Countries
- N. Kirakosyan and A. Mheryan's educational-methodological manual titled Collection of Tasks for the Management Profession, Part 1
- A. Hanisyan's educational-methodological manual titled Fundamentals of Accounting and Auditing (in English)
- M. Frangulyan's educational-methodological manual titled Risk Management and Assessment

➢ The following internal normative documents were officially approved:

- The internal Disciplinary Rules of the European University of Armenia (new edition)
- Procedure for Awarding Honorary Titles of European University of Armenia
- Students Mentoring Policy and Procedure at the European University of Armenia
- EUA Assessment Policy and Assessment Rubrics for Student Evaluation at the European University of Armenia
- Order on Professional Consultation Delivery to Chairs of the European University of Armenia (Co-chair)

- Հայաստանի եվրոպական համալսարանում ուսանողների մենթորության քաղաքականություն և ընթացակարգը,
- ՀԵՀ ուսումնառողների գնահատման քաղաքականությունն ու գնահատման ռուբրիկները,
- ՀԵՀ ամբիոններին մասնագիտական խորհրդատվության մատուցման (Co-chair) կարգ,
- ՀԵՀ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման կարգ,
- ՀԵՀ գիտական խորհրդի կանոնակարգը (նոր խմբագրությամբ),
- ՀԵՀ անցաքարտերի պատրաստման, տրամադրման և օգտագործման կանոնակարգ,
- ՀԵՀ Ուսանողական նպաստների և կրթաթոշակների կանոնակարգ (նոր խմբագրությամբ):

➢ ՀԵՀ գիտխորհրդին կից էթիկայի հանձնաժողովում 2023-2024 ուստարվա ընթացքում քննարկվել է 1 դիմում, որի արդյունքում երկու ուսանողների տրվել է խիստ նկատողություն:

➢ Հաստատվել է ՀԵՀ Իրավագիտության ամբիոնին կից Աշխատանքային իրավունքի կլինիկայի հիմնումն ու վերջինիս կանոնադրությունը:

➢ Լրամշակվել և հաստատվել են ՀԵՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների, Գրաֆիկական դիզայն, Ճարտատարապետություն, Հոգեբանություն, Տուրիզմ, Լեզվաբանություն, Կառավարում,

- Order on Application of Accumulation and Transfer of Academic Credits of the European University of Armenia
- Work Regulations of the Scientific Council of the European University of Armenia (new edition)
- Regulations for the Preparation, Issuance, and Use of Access Cards at the European University of Armenia
- Regulations on Allocation of Subsidies and Scholarships to the students of the European University of Armenia (new edition)

➢ The Ethics Committee attached to the Scientific Council of the EUA reviewed one application during the 2023-2024 academic year, resulting in formal reprimands being issued to two students

➢ The establishment and charter approval of the Labor Law Clinic attached to the Chair of Law at the EUA.

➢ The educational programs of the EUA, as well as the specialties in Information Technology, Graphic Design, Architecture, Psychology, Tourism, Linguistics, Management, Marketing, Economics, Finance, Law, and International Relations, were revised and approved.

➢ The contracts concluded with the administrative and academic staff, as well as with students, were reviewed.

➢ Three representatives of the EUA were awarded the scientific title of Associate Professor.

| | |
|---|---|
| Մարքեթինգ, Տնտեսագիտություն, Ֆինանսներ, Իրավագիտություն և Միջազգային հարաբերություններ մասնագիտությունների կրթական ծրագրերը:<br>➢ Վերանայվել են վարչական և ակադեմիական կազմերի և ուսանողների հետ կնքվող պայմանագրերը:<br>➢ ՀԵՀ ակադեմիկական կազմի երեք ներկայացուցիչ ստացել են դոցենտի գիտական կոչում:<br>➢ ՀԵՀ ակադեմիական կազմի երկու ներկայացուցչի շնորհվել է պատվավոր պրոֆեսորի, երկուսին՝ պատվավոր դոցենտի կոչումներ:<br>➢ ՀԵՀ արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր Գ. Ավետիսյանին շնորհվել է ՀԵՀ դոցենտի կոչում:<br>➢ Հաստատվել է ՀԵՀ սպորտային ակումբի հիմնումն ու վերջինիս կանոնադրությունը: | ➢ Two representatives of the EUA were awarded the title of Honorary Professor, and two others received the title of Honorary Associate Professor.<br>➢ G. Avetisyan, Vice-Rector for External Relations and Internationalization of the EUA, was awarded the title of Associate Professor.<br>➢ The EUA Sport Club establishment and the charter approval. |
| Բուհի բնականոն գործունեությունը կազմակերպվում է 125 վարչական, որի 20%-ը՝ մարզերում, և 258 պրոֆեսորա-դասախոսական աշխատակիցների միջոցով, որի 17%-ը մարզերում:<br>2021-2024 ՀԵՀ պրոֆեսորադասախոսական կազմում գիտական աստիճան և կոչում ունեցողների շարժը ներկայացված է գծապատկերում (տե՛ս գծապատկեր 1): | The operational framework of the university is managed by a total of 125 administrative staff members, 20% of whom are in regional locations, and by 258 academic staff members, 17% of whom are based in regional locations.<br>The progression of academic degrees and titles among the academic staff of the EUA from 2021 to 2024 is illustrated in the diagram (see Diagram 1). |

**Գծապատկեր/Chart 1. ՀԵՀ պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ գիտական աստիճանի և կոչման 2021-2025թթ./ EUA academic staff holding academic degrees**




| | |
|---|---|
| Հաշվետու ժամանակահատվածում ՀԵՅ վարչական և ՊԴ կազմերի ներկայացուցիչների համակար կազմակերպվել են մի շարք վերապատրաստումներ, ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային: | Throughout the reporting period, several international and national training sessions were held for the administrative and academic staff of the European University of Armenia. |
| ՀԵՅ-ի և Իտալիայի Եվրակ գիտահետազոտական կենտրոնի /Eurac Research/ նախաձեռնությամբ 2024թ. հունիսի 27-ին ՀԵՅ-ում տեղի ունեցավ «Մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային հեռանկարները» խորագրով աշխատաժողով: Աշխատաժողովին մասնակցություն ունեցան Իտալիայի Eurac Research-ի առաջադեմ հետազոտությունների կենտրոնի հետազոտողներ՝ զաղաքականության, մարդու | Under the collaborative initiative, the European University of Armenia and the Italian Eurac Research Center on June 27, 2024, held a workshop titled 'International Perspectives on the Protection of Cultural Heritage' at the European |

| | |
|---|---|
| իրավունքների և կայունության գիտությունների թեկնածու Էլիզա Պիրասը և կառավարման հայցորդ Գրետա Էշբաումերը: |  University of Armenia. The workshop was attended by researchers from the Advanced Research Center at the Italian Eurac Research: Elisa Piras, PhD in Politics, Human Rights, and Sustainability, and Greta Eschbaumer, PhD in Management. |
|  2024թ-ի հունիսի 21-ից հունիսի 25-ը Եվա Մարիա Մոարին՝ Eurac Research-ի Հետազոտությունների աջակցության գրասենյակի ղեկավարին և Eurac Research-ի Հետազոտությունների աջակցության ավագ պատասխանատու Էրիկա Լավանգոյին «Առաջարկների պատրաստում Էրազմուս+» և «Հորիզոն Եվրոպա» ծրագրերի շրջանակներում ՀԵՀ վարչական կազմի և դասախոսների համար անցկացրել են դասընթաց «Հորիզոն Եվրոպա» և «Էրազմուս+» հայտերի պատրաստման և ներկայացման վերաբերյալ: | From June 21 to June 25, 2024, Eva Maria Moari, Head of the Research Support Office at Eurac Research, and Erika Lavango, Senior Research Support Officer at Eurac Research, conducted a training session on the preparation and submission of Horizon Europe and Erasmus+ applications. The course was designed for the administrative staff and lecturers of the EUA and was conducted within the framework of the Erasmus+ and Horizon Europe programs. |
|  ՀԵՀ դասախոսները մասնակցեցին «Նեյրոլեզվական քոուչինգ. ուղեղին հարմար քերականություն» սեմինարների շարքին | EUA lecturers participated in a seminar series on "Neurolanguage Coaching: Brain-Friendly Grammar." |

| | |
|---|---|
|  Ս/թ մայիսի 6-ից 10-ը Հայաստանի եվրոպական համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր Գոհար Ավետիսյանն ու ՀԵՀ որակի ապահովման և կրթական բարեփոխումների դեպարտամենտի ղեկավար Կարինե Սարգսյանը մասնակցեցին Լիտվայի Վիլնիուսի Քոլեջիում-Կիրառական գիտությունների համալսարանի և ԵՎՐԱՇԵ-ի հետազոտական խմբի համատեղ իրականացված «Անձնակազմի վերապատրաստման շաբաթ»-ին (Staff Training Week), որը կազմակերպվել էր Էրազմուս+ ծրագրի «Միջազգային կրեդիտային շարժունություն» գործողության շրջանակում: |  From May 6 to 10, 2024, Gohar Avetisyan, Vice-Rector for External Relations and Internationalization, and Karine Sargsyan, Head of the Quality Assurance and Educational Reforms Department at the European University of Armenia, participated in the "Staff Training Week," jointly organized by Vilniaus Kolegija, University of Applied Sciences (VIKO), and the EURASHE research group. The event was held within the framework of the Erasmus+ "International Credit Mobility" Key Action 1. |
|  2024 թվականի մարտի 12-ից մարտի 14-ը Իտալիայի Բոզեն-Բոլցանո քաղաքում գտնվող Եորակ հետազոտական կենտրոնի հետազոտությունների աջակցության բաժնի ղեկավար Եվա Մարիա Մոարին ՀԵՀ-ում անցկացրեց եռօրյա վերապատրաստման դասընթացներ «Ինչպես գրել հաղթող առաջարկ» թեմայով՝ ՀԵՀ-ի և Եվրոպական կամպուսի կառույցների համապատասխան ներկայացուցիչների համար: |  From March 12 to March 14, 2024, Eva Maria Moari, Head of Research Support at the Eurac Research Center in Bozen-Bolzano, Italy, conducted a three-day training session at the EUA on "How to Write a Winning Proposal." The course was designed for relevant representatives of the EUA and European Campus structures. |
| Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ՀԵՀ-ում անցակցվել են բազմաթիվ սեմինարներ և | During the reporting period, numerous seminars and workshops were held at the EUA on topics such as plagiarism, |

| | |
|---|---|
| աշխատարաններ գրագողության, ակադեմիկական ազնվության, էթիկայի և բարեվարքության ու մի շարք այլ թեմաներով, որոնց նպատակն էր բարձրացնել աշխատակիցների ոչ միայն մասնագիտական, այլ նաև փափուկ հմտությունները: | academic integrity, ethics and good conduct, among others. The aim of these sessions was to enhance both the professional skills and soft skills of employees. |
| Նախորդ ուսումնական տարում ՀԵՀ-ում ներդրվեց Քո-Չեյրների ինստիտուտը, որի շրջանակներում ՀԵՀ յուրաքանչյուր ամբիոն ունի եվրոպական գործընկեր բուհից նշանակված Քո-Չեյրը, որը իրականացնում է ամբիոնի դասախոսների վերապատրաստում, վարպետաց դասեր,  խորհրդատվություններ ուսանողների համար: 2023-2024 ուսումնական տարում իրենք Քո-չեյրների հետ ակտիվորեն համագործակցել են Իրավագիտության ամբիոնը, Հոգեբանության ամբիոնը, Կիրառական լեզվաբանության ամբիոնը, Կառավարման ամբիոնը: Առցանց հանդիպումների ընթացքում քննարկվել են մասնագիտության արդի միտումները, դասընթացները գործնական դարձնելու ժամանակակից մեթոդները, միջազգային հետազոտող-գործընկերների հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունները և մի շարք այլ հարցեր: | In the previous academic year, the Co-Chairs Institute was introduced at the EUA. Under this framework, each chair at the EUA appoints a Co-Chair from a European partner university. The Co-Chair is responsible for retraining the department's lecturers, providing consultations, and conducting master classes for students.  In the 2023-2024 academic year, the Chairs of Law, Psychology, Applied Linguistics, and Management actively collaborated with their Co-Chairs. During online meetings, they discussed current trends in their fields, modern approaches to making courses more practical, opportunities for expanding cooperation with international research partners, and a range of other topics. |

| ՈՒՍԱՆՈՂՆԵՐ | STUDENTS |
|---|---|
| ՀԵՀ Երևանի ուսանողների թիվը 2023-2024 ուստարում ուսանողների թիվը աճել է շուրջ 24%-ով և կազմել 3053, որոնցից՝<br>➢ առկա ուսուցման բակալավրիատում՝ 1178 ուսանող<br>➢ հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 1525 ուսանող,<br>➢ առկա ուսուցում մագիստրատուրայում՝ 136 ուսանող,<br>➢ հեռակա ուսուցում մագիստրատուրայում՝ 57 ուսանող,<br>➢ տարեկետման մեջ գտնվող՝ 157 ուսանող: | The number of students at the EUA in Yerevan increased by approximately 24% in the 2023-2024 academic year, reaching a total of 3,053, with the distribution as follows:<br>➢ Full-time Bachelor's Degree: 1178 students,<br>➢ Part-time Bachelor's Degree: 1525 students,<br>➢ Full-time Master's Degree: 136 students,<br>➢ Part-time Master's Degree: 57 students,<br>➢ Leave on Absence: 157 students. |
| ՀԵՀ մասնաճյուղերի՝ Կապանի, Իջևանի, Գյումրու և Վանաձորի ուսանողների թիվը կազմում է 771, որից 42-ը գտնվում են տարեկետման մեջ:<br>2023-2024 ուստարում ՀԵՀ Երևանի ուսանողների ընդհանուր թվի /2896 ուսանող/ շուրջ 6%-ը (169 ուսանող, նախորդ տարվա 144-ի փոխարեն) հանդիսացել են միջազգային ուսանողներ: Այդ թվում՝<br>● Առկա բակալավրիատ՝ 143 ուսանող,<br>● Հեռակա բակալավրիատ՝ 11 ուսանող,<br>● Առկա մագիստրատուրա՝ 15 ուսանող:<br>Այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ միջազգային ուսանողների տեսակարար կշիռը չնայած ընդհանուրում նվազել է, սակայն, թիվը ավելացել է 17,5%-ով, սա պայմանավորված է ՀԵՀ հայաստանյան դիմորդների թվի կտրուկ աճով: | The total number of students at the EUA branches in Kapan, Ijevan, Gyumri, and Vanadzor is 771, with 42 students on leave of absence.<br>In the 2023-2024 academic year, international students at the EUA in Yerevan comprised approximately 6% of the total student body of 2,896 students. The number of international students increased from 144 to 169 compared to the previous academic year. This includes<br>● 143 full-time Bachelor's students,<br>● 11 part-time Bachelor's students,<br>● 15 full-time Master's students.<br>It is noteworthy that, although the overall proportion of international students decreased, the number of international students increased by 17.5%. This increase is attributed to a significant rise in the number of applicants from Armenia to EUA. |

| | |
|---|---|
| Եվրոպական համալսարանում գործում է նախապատրաստական բաժին, որը 2023-2024 ուստարում ունեցել է 247 սովորող, ինչը 13%-ավելին է քան նախորդ ուսումնական տարին: Նախապատրաստական բաժնում սովորողների շուրջ 23%-ը միջազգային սովորողներ են:<br>2023-2024 ուսումնական տարում ՀԵՀ նախապատրաստական բաժնի սովորողների շուրջ 87%-ը հաջողությամբ ավարտել են նախապատրաստական բաժինը և դարձել ՀԵՀ ուսանողներ (214 ուսանող):<br>ՀԵՀ մեծ ուշադրություն է հատկացնում նախապատրաստական բաժնի գործունեությանը, քանի որ վերջինս հանդիսանում է բուհի ընդունելության կայունությունը ապահովող հիմնական մեխանիզմներից մեկը: | The European University has a preparatory department that enrolled 247 students in the 2023-2024 academic year, marking a 13% increase compared to the previous year. Approximately 23% of students in the preparatory department are international students.<br>In the 2023-2024 academic year, about 87% of students in the preparatory department successfully accomplished the program and became full-time students of the European University (214 students).<br>The university gives considerable attention to the preparatory department, as the latter is a key mechanisms for ensuring sustainable admissions to the institution |
| 2023-2024 ուստարվա ընթացքում անբավարար առաջադիմության, բացակայությունների և այլ պատճառներով ՀԵՀ-ից հեռացվել կամ ազատվել են 341 ուսանող, որից՝<br>• առկա բակալավրիատ՝ 121 ուսանող,<br>• հեռակա բակալավրիատ՝ 209 ուսանող,<br>• առկա մագիստրատուրա՝ 6 ուսանող,<br>• հեռակա մագիստրատուրա՝ 5 ուսանող:<br>Վերականգնվել կամ այլ բուհերից տեղափոխվել են 61 ուսանող, որից<br>• առկա բակալավրիատ՝ 14 ուսանող,<br>• հեռակա բակալավրիատ՝ 47 ուսանող: | During the 2023-2024 academic year, a total of 341 students were dismissed or released from the European University of Armenia (EUA) due to various reasons, including insufficient academic progress, excessive absences, and other grounds.<br>• 121 Full-time Bachelor's students<br>• 209 Part-time Bachelor's students,<br>• 6 Full-time Master's students,<br>• 5 Part-time Master's students.<br>During the 2023-2024 academic year, 61 students re-enrolled or transferred to the European University of Armenia from other Universities<br>• 14 Full-time Bachelor's students,<br>• 47 Part-time Bachelor's students. |
| Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով ՀԵՀ գրադարանը շարունակական համալրվում է: | To support the implementation of professional educational programs, the EUA library is continuously updated. |

| | |
|---|---|
| ՀԵՀ գրադարանում 2024թ-ի սեպտեմբերի դրությամբ առկա են 9194 գրքեր, որից 3859-ը մասնագիտական, 5335-ը ոչ մասնագիտական կամ հարակից: Հաշվետու տարվա ընթացքում ձեռք է բերվել 62 մասնագիտական գիրք, որից 11-ը տնտեսագիտության, 18-ը հոգեբանության, 5-ը միջազգային հարաբերությունների, 5-ը իրավաբանության, 10-ը զբոսաշրջության ոլորտների մասնագիտական գրքեր են, 17-ը՝ գեղարվեստական գրականություն: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ՀԵՀ գրադարանի ծառայություններից օգտվել են 2212 ուսանող, որի 52%-ի դեպքում իրականացվել է գրքի սպասարկում, 41%-ը օգտվել է համակարգիչներից, 7%-ը միայն ընթերցասրահից: ՀԵՀ գրադարանը ունի ուղիղ հասանելիություն ՀՀ Կոհա էլեկտրոնային ամենախոշոր գրադարանին, Իրտեկ իրավական բազային, և ԳԱԱ-ի գրադարանային ֆոնդին: | As of September 2024, the library's collection comprises 9,194 books, consisting of 3,859 professional books and 5,335 non-professional or related books. During the reporting year, the library acquired 62 new professional books, including 11 in economics, 18 in psychology, 5 in international relations, 5 in law, 10 in tourism, and 17 in fiction. In the 2023–2024 academic year, 2,212 students utilized the services of the EUA library, with 52% receiving book services, 41% using computers, and 7% accessing only the reading room. The EUA library has direct access to the largest electronic library in the Republic of Armenia, the Irtek legal database, and the library collection of the National Academy of Sciences |
| Հայաստանի եվրոպական համալսարանի ուսանողները բացի կրթական գործունեությունից ՀԵՀ ուսանողական խորհրդի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցում են երկրում հասարակական, կրթական, մշակութային և այլ բնույթի ուսումնադաստիարակչական միջոցառումների: | In addition to their academic endeavors, students at the European University of Armenia, under the guidance of the EUA Student Council, actively engage in a wide range of social, educational, cultural, and other extracurricular activities throughout the country. |
| Ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացման նպատակով Եվրոպական համալսարանի կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստումներ և վարպետաց դասեր ոլորտի պրակտիկ ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում ուսանողներին: | To enhance the professional competencies of students, the Career Center at the European University of Armenia regularly organizes training sessions and master classes led by industry practitioners. Through interactions with industry professionals, these sessions enable students to gain firsthand insights, substantially enhancing their field-specific understanding. |

| | |
|---|---|
| ՀԵՀ-ում իրականացվող կրթական, մշակութային, սպորտային, ուսումնադաստիարակչական, կարիերայի զարգացման և այլ բնույթ միջոցառումները ներկայացված են ՀԵՀ պաշտոնական կայքում և սոցիալական հաշիվներում: Վերջիններս թույլ են տալիս ուսանողների շրջանում ձևավորել ազգային և համամարդկային արժեքներ և սկզբունքներ ու դառնալ պատասխանատու մասնագետներ: | The European University of Armenia (EUA) regularly showcases its educational, cultural, sports, and career development initiatives, along with other activities, on its official website and social media platforms. These channels serve as key sources of information for students, helping them cultivate both national and universal values and principles. By highlighting a diverse range of activities, the university encourages students to develop a well-rounded perspective and fosters their growth into responsible professionals |
|  2024թ-ի օգոստոսի 5-10 ՀԵՀ ուսանողները մասնակցեցին «Միասնության ուժը 2024» ուսանողական-երիտասարդական, ռազմահայրենասիրական ամենամյա հավաքին, որտեղ ՀԵՀ ուսանողները պատվով ներկայացրեցին իրենց սիրելի բուհը՝ ստանալով հաղթական գավաթ և պատվոգրեր: |  From August 5-10, 2024, EUA students participated in the “Power of Unity 2024” annual student-youth, military-patriotic gathering, where they proudly represented their university, winning a victory cup and receiving certificates. |
|  ՀԵՀ ուսանողները մասնակցել են «Եվրասիա» ծրագրի կողմից կազմակերպված «Նոր ռազմավարություն» ("Новая стратегия") միջազգային երիտասարդական ֆորումին: | EUA students participated in the “New Strategy” (“Новая стратегия”) international youth forum, organized by the “Eurasia” program. |

| | |
|---|---|
|  2024թ-ի հունիսի 5-ին ՅԵՅ ուսանողները մասնակցեցին «Միջբուհական բանավեճ 2024» բանավեճային մրցույթին և անցնելով եզրափակիչ փուլ՝ հաղթող ճանաչվեցին՝ զբաղեցնելով 1-ին հորիզոնականը: |  On June 5, 2024, EUA students participated in the “Intercollegiate Debate 2024” competition, advancing to the final round and ultimately securing 1st place as winners. |
| ՅԵՅ ուսանողների անգլերենի իմացությունը պարբերաբար գնահատվում է ՅԵՅ գործընկեր եվրոպական լեզուների միջազգային ինստիտուտի կողմից: Արդյունքում Ուսանողներին շնորհվում է լեզվամակարդակի վերաբերյալ հավաստագիր: |  The International Institute of European Languages, a partner of the university, regularly evaluates the English language proficiency of EUA students Accordingly, a language proficiency certificate is issued to the students |
|  Միջբուհական մարզամշակութային և ինտելեկտուալ թվով 6-րդ «Ունիվերսիադա»-ի շրջանակներում «Երգի և թատրոնի» մրցույթներում Յայաստանի եվրոպական համալսարանի մասնակիցները արժանացան «Ժյուրիի համակրանք» մրցանակին, իսկ ՅԵՅ Ուսանողական խորհրդին շնորհվեց «Ակտիվ և համախմբված մասնակցության համար» շնորհակալագիր: |  Within the framework of the 6th Interuniversity Sports, Cultural, and Intellectual “Universiade”, participants from the European University of Armenia were honored with the “Jury's Sympathy” award in the “Song and Theater” competitions. Additionally, the EUA Student Council was awarded a certificate of appreciation “For Active and Consolidated Participation”. |

| | |
|---|---|
| ՀԵՀ ուսանողների ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների կազմակերպման, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվությունների և աշխատաշուկայի հետ կապը ապահովելու նպատակով Հայաստանի եվրոպական համալսարանը շարունակական ավելացնում է գործընկերների թիվը՝ համագործակցության պայմանագրեր կնքելով ՀԵՀ մասնագիտական ոլորտների առաջատար կազմակերպությունների հետ:<br>Հաշվետու տարում կնքվել են 5 նոր պայմանագրեր և 1 համագործակցության հուշագիր: | To organize educational and pre-graduation internships for EUA students, as well as to provide professional consultations and facilitate connections with the labor market, the European University of Armenia continuously expands its network of partners by signing cooperation agreements with leading organizations in relevant professional fields.<br>In the reporting year, 5 new agreements and 1 memorandum of cooperation were signed. |
| Հաշվետու տարում Հայաստանի եվրոպական համալսարանը վերահավատարմագրվել է գերմանական ASIIN որակի ապահովման գործակալության կողմից՝ ստանալով միջազգային ինստիտուցիոնալ հավատարմագրում: | In the reporting year, the European University of Armenia was re-accredited by the German ASIIN quality assurance agency, earning international institutional accreditation. |
|     | |
| **ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ** | **GRADUATES** |
| Բակալավրի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորումը տեղի է ունեցել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության միջոցով: | The final attestation for bachelor's and master's degrees was conducted through the defense of graduation works and master's theses. |

| | |
|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում /2023-2024 ուստարի/ 450 ուսանող ամփոփիչ ատեստավորման արդյունքում ստացել են բակալավրի և մագիստրոսի որակավորման դիպլոմներ, այդ թվում՝<br>• Առկա բակալավրիատ՝ 205 ուսանող,<br>• Հեռակա բակալավրիատ՝ 177 ուսանող,<br>• Առկա մագիստրատուրա՝ 55 ուսանող<br>• Հեռակա մագիստրատուրա՝ 13 ուսանող:<br>2022-2023 ուստարում ՀԵՀ շրջանավարտների թիվը կազմել է 353, 2021-2022 ուստարում՝ 304, 2020-2021 ուստարում՝ 267, 2019-2020 ուստարում՝ 326 և այլն: | During the 2023–2024 academic year, 450 students received bachelor's and master's degree diplomas as a result of the final attestation, including:<br>• 205 students for full-time bachelor's degrees<br>• 177 students for part-time bachelor's degrees<br>• 55 students for full-time master's degrees<br>• 13 students for part-time master's degrees<br>The number of EUA graduates in recent academic years was as follows: 353 in 2022–2023, 304 in 2021–2022, 267 in 2020–2021, and 326 in 2019–2020, etc. |
| 2023-2024 ուստարվա շրջանավարտների 13%-ը ստացել է գերազանցության դիպլոմ, այդ թվում՝ 37 ուսանող՝ բակալավրի որակավորմամբ և 20 ուսանող մագիստրոսի որակավորմամբ: | In the 2023–2024 academic year, 13% of graduates of EUA received diplomas of excellence, including 37 Bachelor's degree recipients and 20 Master's degree recipients. |
| **ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ** | **TUITION FEE REIMBURSEMENT** |
| Հայաստանի եվրոպական համալսարանի ուսանողներին տրամադրվում են ուսման վարձի փոխհատուցումներ ինչպես պետության, այնպես էլ բուհի կողմից:<br>ՀՀ ԿԳՄՍՆ սահմանված կարգով Բուհի ուսանողներին տրամադրվում են փոխհատուցում՝ վարձավճարից, հետևյալ չափանիշների հիման վրա.<br>• Արտոնություններից օգտվողներին (ուսման վարձի լրիվ փոխհատուցում)<br>• Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում<br>• Պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում | Tuition reimbursement for students at the European University of Armenia (EUA) is provided through both state and university. In accordance with the guidelines established by the Ministry of Education, Science, Culture, and Sports of the Republic of Armenia, students are eligible for reimbursement of their tuition fees.<br>The criteria for this reimbursement are as follows:<br>• Full tuition reimbursement provided by the state<br>• Partial tuition reimbursement provided by the state<br>• Beneficiaries are eligible for full tuition fee reimbursement.<br>The tuition waivers offered during the 2023-2024 academic year are outlined below (see Chart 1). |

| | |
|---|---|
| 2023-2024 ուստարվա ընթացքում տրամադրված զեղչերը ներկայացնենք ստորև (տե՛ս աղյուսակ 1). | |

**Աղյուսակ/ Table 1. Պետության կողմից ուսնողների վարձի փոխհատուցում/ Reimbursement of tuition fees by the state**

| N | Արտոնություններ/ Benefits | Ուսանողների թիվ/ Students number |
|---|---|---|
| 1 | Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում (այդ թվում՝ «Պատիվ ունեմ» ծրագրով)/ Full reimbursement of tuition fees by the state (Including “Pativ unem” program) | 31 ուսանող/students (այդ թվում՝ 1 ուսանող «Պատիվ ունեմ» ծրագրով) A total of 31 students, including 1 participant in the "I Have the Honor" program |
| 2 | Պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում/ Partial reimbursement of tuition fees by the state | 436 ուսանող/students |
| 3 | Արտոնություններից օգտվողներին/ Beneficiaries | 31 ուսանող/students |

| | |
|---|---|
| Համալսարանի կողմից ուսանողներին տրվում են զեղչեր Բուհի հաշվին՝ հետևյալ չափանիշներից ելնելով և համամասնություններով (տե՛ս աղյուսակ 2). | The university offers tuition waivers to the students at its own expense based on the following criteria and proportions (see Table 2): |

Աղյուսակ/ Table 2. 2023-2024 ուստարում Բուհի կողմից ուսանողներին տրամադրված զեղչերը/ Tuition waiver provided to students by the University in 2023-2024 academic year

| N | Զեղչի Տեսակ/ Tuition waiver types | 10% | 15% | 20% | 30% | 40% | 50% | 100% | Total |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Մարտական հերթափոխի մասնակիցներին/ Participants of the combat shift | | | | 15 | | | | 15 |
| 3. | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին/ Children from socially vulnerable families | 15 | 2 | 7 | 1 | 2 | 4 | | 31 |
| 4. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներին/ One-sided orphans | | | | | | 18 | | 18 |
| 6. | Հաշմանդամ ծնող ունեցող երեխաներին/ Children with disabled parents | | | | 1 | | | | 1 |
| 7. | Նույն ընտանիքից ՀԵՀ-ում երկու ուսանող միաժամանակ ունենալու դեպքում/ Two students from the same family in EUA at the same time | | 12 | | | | | | 12 |
| 8. | Աշխատակիցների երեխաներին/Employees' children | | | 14 | | | | | 14 |
| 9. | Առաջադիմության հիմքով/ Based on progress | | | | | | 15 | 16 | 31 |
| 10. | ՀԵՀ նախապատրաստականից և քոլեջներից ընդունված/ Students admitted from EUA preparatory courses/department and colleges | 56 | | 28 | | | | | 84 |
| 11. | 3 և ավելի անչափահաս երեխաներ ունեցողներին / People with three or more minor children | | | | 1 | | | | 1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ/ TOTAL | | 71 | 14 | 49 | 18 | 2 | 37 | 16 | 207 |

| | |
|---|---|
| 2024թ.-ին ՀԵՀ ընդունվել են շուրջ 1231 դիմորդ, այդ թվում՝ 1091-ը Երևանում, 140-ը՝ մասնաճյուղերում: Ընդունելության արդյունքներն ըստ մասնագիտությունների հետևյալն են (տե՛ս աղյուսակ 3). | In 2024, approximately 1,231 applicants were admitted to EUA, including 1,091 in Yerevan and 140 at the branches. The admission results by majors are as follows (see Table 3): |

### Աղյուսակ/ Table 3. 2024թ. ընդունելության արդյունքները/ ADMISSION RESULTS 2024

| N | Մասնագիտություն/ Specialty | Բակալավրիատ/ Bachelor's degree | | | | Մագիստրատուրա/ Master's Degree | | | Քոլեջից 2-րդ կուրս/ 2nd year from college | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առկա/ Full-time | | Հեռակա/ Part-time | | Առկա/ Full-time | | ՀՀեռակա/ Part-time/ RA | Առկա/ Full-time | Հեռակա/ Part-time |
| | | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | Օտար/ Foreign | ՀՀ/ RA | ՀՀ/ RA | ՀՀ/ RA |
| 1. | Տեղեկատվական տեխնոլոգիաներ/ Information Technologies | 37 | 14 | 75(20*) | 8 | 7 | 7 | | | 20 |
| 2. | Տեղեկատվական համակարգեր / Information Systems | 17 | | | | | | | | 5 |
| 3. | Ինֆորմատիկա / / Informatics | | | 12 | | | | | | 19 |
| 5. | Գրաֆիկական դիզայն / Graphic design | 18 | | 7 | | 8 | | | | 6 |
| 6. | Կապի միջոցներ և միկրոէլեկտրոնային սխեմաներ (Սինոփսիս)/ Communication means and microelectronic circuits (Synopsis) | | | | | 25 | | | | |
| 7. | Տնտեսագիտություն / Economics | 31 | | 22 | | | | | | 16 |
| 8. | Շուկայագիտություն / Marketing | 29 | | 17 | | | | | | 15 |
| 9. | Կառավարում/ Management | 54 | 24 | 117 (20*+ 20**) | | 9 | 3 | 2 | | 27 |
| 10. | Ֆինանսներ և բանկային գործ / Finances and Banking | 25 | | 26 | | | | | | 15 |
| 11. | Իրավագիտություն / Law | 101 | 4 | 94 (20*+ 20**) | | 16 | | 25 | | 4 |
| 12. | Միջազգային հարաբերություններ/ International relation | 38 | | 15 | | 3 | | | | |
| 13. | Լեզվաբանություն (Լեզու և հաղորդակցություն)/ Linguistics (Language and Communication) | 26 | | | | | 3 | | 2 | |
| 14. | Հոգեբանություն / Psychology | 19 | 12 | 36(20*) | | 5 | | | | |
| 15. | Մասնագիտական մանկավարժություն-Անգլերեն լեզու և գրականություն / Professional pedagogy -English Language and Literature | | | | | 2 | | | | |
| 16. | Զբոսաշրջություն և հյուրանոցային գործ / Tourism and Hotel Business | 21 | | 64(20)** | | | | | | 16 |
| 17. | Ճարտարապետություն / Architecture | 8 | | | | | | | | |
| **Ընդամենը/ Total** | | **424** | **54** | **485 (140)** | **8** | **75** | **13** | **27** | **2** | **143** |

* - Կապանի մասնաճյուղի ուսանողներ /Students of Kapan Branch

** - Իջևանի մասնաճյուղի ուսանողներ/ Students of Ijevan Branch

| | |
|---|---|
| Դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 10%-ով (2023թ.-ին՝ 1129, 2022թ.-ին՝ 1024, 2021թ.-ին՝ 731, 2020թ.-ին՝ 687, 2019թ.-ին՝ 611): | The number of applicants increased by 10% compared to the previous year, rising from 1,024 in 2022 to 1,129 in 2023. In comparison, the number of applicants was 731 in 2021, 687 in 2020, and 611 in 2019 |
| Ընդունելությանը նպաստելու նպատակով Հայաստանի եվրոպական համալսարանը հաշվետու ուսումնական տարում կազմակերպեց նաև Բաց դռների օրեր, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցավ Կրթություն և Կարիերա ամենամյա ցուցահանդեսում:<br>Վերջիններս նպաստում են ինչպես բուհի ընդունելությանը, այնպես էլ բուհի դրական համբավի ձևավորմանն ու ճանաչելիության մեծացմանը: | During the reporting academic year, the European University of Armenia actively promoted admissions through strategic initiatives, including Open Door Days and active participation in the annual “Education and Career exhibition”. These efforts enhanced the university's visibility and reputation, fostering trust and recognition among the broader community and positively influencing prospective students and stakeholders. |
| 2024թ-ի ապրիլի 24-26 Հայաստանի եվրոպական  համալսարանը մասնակցեց Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում անցկացված ամենամյա հեղինակավոր Համաշխարհային կրթության և ուսուցման ցուցահանդեսին (GETEX 2024)՝ ներկայանալով Եվրոպական Կամպուսի ընդհանուր տաղավարի շրջանակներում: |  From April 24–26, 2024, the European University of Armenia participated in the prestigious annual Global Education and Training Exhibition (GETEX 2024) in Dubai, United Arab Emirates, showcasing its programs within the European Campus pavilion. |
| 2024 թ-ի ապրիլի 10-12 ՀԵՀ-ը մասնակցեց ամենամյա «Կրթություն և կարիերա EXPO 2024» 23-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին: | From April 10–12, 2024, EUA participated in the 23rd Annual International Specialized Exhibition, “Education and Career EXPO 2024”. |









| | |
|---|---|
| 2024 թվականի մայիսի 17-ին ՀԵՀ-ը մասնակցություն է ունեցել «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում տեղի ունեցած «Հզորացրո՛ւ, ոգեշնչի՛ր, գործի՛ր» նշանաբանով երիտասարդական էքսպո 2024-ին: |  On May 17, 2024, the EUA participated in Youth Expo 2024, held at the Elite Plaza Business Center under the motto “Empower, Inspire, Act”. |
| ՀԵՀ-ի դիմորդների թիվը ավելացնելու նպատակով իրականացվել են նաև բազմաթիվ այցելություններ դպրոցներ, ՀԵՀ-ում դպրոցների ավարտական դասարաններում սովորողների և քոլեջի վերջին կուրսերում սովորողների համար կազմակերպվել են վարպետաց դասեր, ճանաչողական հանդիպումներ, նախագծեր, աշխատարաններ և մի շարք այլ միջոցառումներ: | To increase the number of applicants to EUA, visits were conducted to numerous schools, and a variety of events were organized for final-year students. These events included master classes, informational sessions, workshops, and other relevant activities. |










| | |
|---|---|
| Դեկտեմբերի 15-ին կայացավ «Իրավական հետազոտություններ և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ» երեկոյան դպրոցը: | On December 15, the evening session titled “Legal Research and Human Rights Protection Mechanisms” was held. |

## ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՅԵՅ հետբուհական կրթական համակարգում պատրաստվում են բարձրագույն որակավորմամբ կադրեր 4 մասնագիտությունների գծով: Դրանք են.

- Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»,
- Ե.13.02 «Ավտոմատացման համակարգեր»,
- ԺԲ.00.02 «Յանրային իրավունք»,
- Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ»:

2023-2024 ուստարում բուհի ասպիրանտուրայում ուսումնառել են 38 ասպիրանտներ և հայցորդներ, այդ թվում՝ 4 օտարերկրացի և 2 դոկտորանտ (տե՛ս գծապատկեր 3):

## SCIENTIFIC ACTIVITY

The EUA postgraduate education system is training highly qualified personnel in 4 specialties. They are:

- Ը.00.02 "Economics, Management of Economy and its Spheres",
- Ե.13.02 "Automation systems",
- ԺԲ.00.02 "Public law",
- Ժ.02.07 "Romano Germanic languages".

In the 2023–2024 academic year, 38 postgraduate students and applicants were enrolled in the university's postgraduate program, including 4 international students and 2 doctoral candidates (see Chart 3).




**Գծապատկեր/Chart 3. Յայցորդների և ասպիրանտների թիվը՝ ըստ մասնագիտությունների/ Number of postgraduate students by specialties**

| | |
|---|---|
| Հաշվետու տարում՝<br>• Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում /Ը.00.02/ մասնագիտությամբ 1ասպիրանտ և 1 հայցորդ հաշվետու տարում ավարտել են ուսումնառությունը ՀԵՀ-ում, սակայն դեռևս չեն պաշտպանել.<br>• Հանրային իրավունք / ԺԲ.00.02/ մասնագիտությամբ 2 հայցորդներ հաշվետու տարում ավարտել են ուսումնառությունը ՀԵՀ-ում:<br>• Ավտոմատացման համակարգեր /Ե.13.02/ մասնագիտությամբ 1ասպիրանտի ուսումնասռությունը ընդհատվել է՝ դիմումի համաձայն:<br>• Ռոմանագերմանական լեզուներ /Ժ.02.07/ մասնագիտությամբ 2 հայցորդ հաշվետու տարում ավարտել են ուսումնառությունը ՀԵՀ-ում, որոնցից 1-ն է դուրս եկել պաշտպանության և ստացել գիտության թեկանծուի աստիճան: | In the reporting year:<br>• One PhD student and one applicant in the specialty of Economics, its branches, and management (code Ը.00.02) completed their studies at EUA, but have not yet defended their theses.<br>• Two applicants in the specialty of Public Law (code ԺԲ.00.02) completed their studies at EUA during the reporting year.<br>• One PhD student in the specialty of Automation Systems (code Ե.13.02) had their studies interrupted, as per their application<br>• Two applicants in the specialty of Romance-Germanic Languages (code Ժ.02.07) completed their studies at EUA, one of whom successfully defended their thesis and received PhD degree. |
| Տարեկան երկու անգամ ՀԵՀ գիտական խորհրդի կողմից երաշխավորվում և հրատարակվում է «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածուն, որը ներառված է ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների ցանկում:<br>Հաշվետու տարում հրատարակվել է 2 գիտական հոդվածների ժողովածու՝ N14(02) և N15(01), որոնց մեջ համապատասխանաբար տեղ են գտել թվով 18 և 20 գիտական հոդվածներ՝ տնտեսագիտության և | Twice a year, the Scientific Council of EUA approves and publishes the European University scientific article collection, which is included in the list of journals recognized by the ESC.<br>During the reporting year, two scientific journals were published: N14(02) and N15(01), containing 18 and 20 scientific articles, respectively, in the fields of economics and management, law, philology, and information technologies.<br>The journal's high quality and academic credibility are upheld through the use of an electronic system for originality verification and a closed peer review process |

| | |
|---|---|
| կառավարման, իրավագիտության, բանասիրության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Յուրօրինակությունը ստուգելու էլեկտրոնային համակարգի և փակ գրախոսության գործիքների կիրառման շնորհիվ ապահովվում է ժողովածուի բարձր մակարդակը և հեղինակությունը: | |
| Թեպետ 2023-2024 ուսումնական տարին լի էր փորձություններով, այնուամենայնիվ ՀԵՀ պրոֆեսորադասախոսական կազմն իրականացրել է հետազոտություններ, որոնց արդյունքներն արտացոլված են մի շարք գիտական հոդվածներում (այդ թվում՝ միջազգային գիտական հանդեսներում), հրատարակվել են մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնք կիրառվում են ի նպաստ արդյունավետ ուսումնառության (տե՛ս աղյուսակ 4.): | Despite the challenges faced during the 2023-2024 academic year, the EUA academic staff conducted research, and the results of this research are reflected in numerous scientific articles (including those published in international journals), published monographs, and educational and methodological manuals, all of which contribute to enhancement of effective learning (see Table 4) |
| Հաշվետու ժամանակաշրջանում ՀԵՀ ակադեմիական կազմի կողմից հրատարակվել է 159 գիտական հոդվածներ, որոնց մոտ 50%-ը՝ միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում: Գիտական հոդվածների մեծ մասը բաժին է ընկնում Կառավարման և Դիզայնի ամբիոնների դասախոսներին, իսկ միջազգային հանդեսներում հրատարակված գիտական հոդվածների քանակով առաջատար են Միկրոէլեկտրոնային սխեմաների ու համակարգերի և Կառավարման ամբիոնների դասախոսները:<br>2023-2024 ուստարում գիտական միջոցառումներին և կոնֆերանսներին ՀԵՀ ՊԴ կազմի ներկայացուցիչները ներկայացրել են 81 զեկույց, որի մոտ 59%-ը միջազգային կոնֆերանսներում: Կոնֆերանսներում ակտիվ | During the reporting period, academic staff of the EUA published 159 scientific articles, approximately 50% of which appeared in reputable international journals. The majority of these articles were authored by lecturers from the Chairs of Management and Design and the Chairs of Microelectronic Circuits and Systems, and Management are leading in the number of publications in international journals.<br>In the 2023–2024 academic year, EUA academic staff presented 81 reports at scientific events and conferences, nearly 59% of which were delivered at international conferences. Lecturers from the Chairs of Design and Psychology were particularly active in conference participation, with the highest number of reports delivered at international events from these two chairs. |

| մասնակցություն են ունեցել հիմնականում Դիզայնի և Յոգեբանության ամբիոնների դասախոսները, միջազգային կոնֆերանսներում զեկույցների թվով առանձնանում են նույն ամբիոնների դասախոսները: | |
|---|---|

**Աղյուսակ/ Table 4. 2023-2024 ուստարվա ընթացքում ՀԵՀ ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության արդյունքները/ The results of the scientific and research activities conducted by the academic staff of the EUA during the 2023-2024 academic year**

| | Կառավար-ման ամբիոն/ Chair of Management | Ֆինանսների և բանկային գործի ամբիոն/ Chair of Finance and Banking | Հոգեբանու-թյան ամբիոն/ Chair of Psychology | Կիրառա-կան լեզվաբա-նության ամբիոն/ Chair of Applied Linguistics | Միկրոէլեկ-տրոնային սխեմաների ու համակար-գերի ամբիոն/ Chair of Microelec-tronic Circuits and Systems | Դիզայնի ամբիոն/ Chair of Design | Միջազգայի ն հարաբերութ յունների ամբիոն/ Chair of International Relations | SS և կիրա-ռական մաթեմա-տիկայի ամբիոն/ Chair of IT and Applied Mathematics | Տուրիզմի ու Սերվիսի ամբիոն/ Chair of Tourism and Service | Իրավա-գիտու-թյան ամբիոն/ Chair of Law | Ընդամենը/ Total |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գիտական հոդվածներ հայաս-տանյան հանդեսներում/ Scientific articles in the Armenian journals | 30 | 3 | 10 | 6 | 3 | 24 | 9 | 4 | 6 | 11 | 106 |
| Գիտական հոդվածներ միջազգային հանդեսներում/ Scientific articles in the international journals | 10 | - | 8 | 3 | 16 | 8 | 3 | 4 | - | 1 | 53 |
| Գիտական զեկույցներ Հայաստանում տեղի ունեցած կոնֆերանսների կամ այլ գիտական միջոցառումների ընթացքում / Scientific reports in conferences or other scientific events in the RA | 3 | - | 3 | - | 2 | 13 | 2 | 6 | 1 | 3 | 33 |
| Գիտական զեկույցներ միջազգային կոնֆերանսներում կամ այլ գիտական միջոցառումներում/ Scientific reports in international conferences or other scientific events | 2 | 3 | 9 | 3 | 7 | 13 | 3 | 5 | 1 | 2 | 48 |
| Մասնագիտական վերապատրաստումներ / Professional trainings | 33 | 3 | 20 | 83 | 7 | 9 | 6 | 2 | 11 | 16 | 187 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեթոդական վերապատրաստումներ/Methodological trainings | 9 | 10 | 4 | 38 | 3 | 5 | 3 | 3 | 4 | 8 | 87 |
| ՀԵՀ-ում իրականացվող վերապատրաստումներ / Trainings conducted at EUA | 4 | 1 | 2 | 6 | - | 1 | 1 | 3 | 2 | 2 | 22 |
| Մենագրություններ հրատարակված ՀՀ-ում/ Monographs published in the RA | 6 | - | - | 1 | - | 1 | - | - | 3 | 2 | 13 |
| Ուսումնամեթոդական ձեռնարկներ/ Teaching and methodlogical manuals | 2 | 1 | - | 1 | - | 2 | 2 | 1 | 4 | 1 | 14 |

2023-2024 ուստարվա ընթացքում ՀԵՀ ՊԴ կազմի ներկայացուցիչները 274 անգամ մասնակցել են վերապատրաստումների, որի 68%-ը՝ մասնագիտական, 32%-ը՝ մեթոդական: Վերապատրաստումների մոտ 10%-ը կազմակերպված է եղել Հայաստանի եվրոպական համալսարանի կողմից:
Հաշվետու ժամանակաշրջանում ՀԵՀ ՊԴ կազմի կողմից հրատարակվել է 13 մենագրություն և 14 ուսումնամեթոդական ձեռնարկ:

In the 2023–2024 academic year, EUA academic staff participated in 274 training sessions. The training portfolio comprised 68% professional development programs and 32% methodological enhancement programs. Approximately 10% of these training sessions were organized by the European University of Armenia.
Additionally, during the reporting period, 13 monographs and 14 educational and methodological manuals were published by the staff of the European University of Armenia.

Հատկանշական է, որ ՀԵՀ ՊԴ կազմի ներկայացուցիչները 2023-2024 ուսումնական տարում մի շարք միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում հրապատակված գիտական հոդվածների հեղինակներ և համահեղինակներ են, մասնավորապես՝

- Միկրոէլեկտրոնային սխեմաների ու համակարգերի ամբիոնի վարիչ Վ. Մելիքյանի հեղինակությամբ և համահեղինակությամբ հաշվետու ժամանակահատածում միջազգային հեղինակություն և ճանաչում ունեցող հանդեսներում (Այդ թվում՝ Վրաստանի,

It is worth noting that members of the EUA Academic Staff are authors and co-authors of scientific articles published in several prestigious international journals during the 2023-2024 academic year, including:

- Nine scientific articles were published in reputable journals (including those from Georgia, Russia, China, and Spain) under the authorship and co-authorship of Professor Vazgen Melikyan, Head of the Chair of Microelectronic Circuits and Systems.
- Articles were published by the following lecturers from the same department in internationally recognized journals (including those from the United Kingdom,

| | |
|---|---|
